ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8, 1959 Общественные науки

Վ. Կ. Խաչատրյան

ՄՏԱՎՈՐ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵՐՁԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Մտավոր և ֆիզիկական աշխատանքի հակադրությունը՝ արտահայտելով հակամարտ դասակարգերի շահերը, դասակարգային հասարակության զարգացման ընթացքում ոչ միայն չի անհետանում, այլ ավելի սուր բնույթ է կրում։ Այդ հակադրությունը առավել սրվածության է հասնում իմպերիալիզմի շրջանում։

Մարքսը և Էնգելսը խորագնին վերլուծելով կապիտալիստական արտադրաեղանակը, հանգեցին այն կարևոր եզրակացությանը, որ կապիտալիստական կարգերի վերացումով կոչնչանա նաև մտավոր և ֆիզիկական աշխատանքի հակադրությունը։ Սակայն, իհարկե, դժվար էր կոնկրետ կերպով, որոշակիորեն ցույց տալ այդ հակադրության լուծման ուղիները, հասարակության զարգացման տարբեր շրջաններում։

Այդ հարցը իր զարգացումն ստացավ Լենինի մոտ, որը իր «Պետություն և ռևոլյուցիա» աշխատության մեջ գրում է. «Պետության լիակատար մահացման տնտեսական հիմքը կոմունիզմի այնպիսի բարձր զարգացումն է, որի ժամանակ անհետանում է մտավոր և ֆիզիկական աշխատանքի հակադրությունը»[1]։ Հետագայում Լենինը հանգեց այն եզրակացությանը, որ սոցիալիստական հասարակության զարգացման ընթացքում՝ կոմունիզմի օրոք, ոչ միայն կվերանա մտավոր և ֆիզիկական աշխատանքի հակադրությունը, այլև նրանց միջև եղած տարբերությունները։ «Պարզ է, որ դասակարգերի լիակատար ոչնչացման համար պետք է ոչ միայն տապալել շահագործողներին, կալվածատերերին ու կապիտալիստներին, ոչ միայն վերացնել նրանց սեփականությունը, պետք է վերացնել նաև արտադրության միջոցների ամեն մի մասնավոր սեփականություն, պետք է ոչնչացնել ինչպես քաղաքի և գյուղի միջև եղած տարբերությունը, այնպես էլ ֆիզիկական աշխատանքի մարդկանց և մտավոր աշխատանքի մարդկանց միջև եղած տարբերությունը։ Այդ շատ երկարատև գործ է»[2]։

Պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում, երբ արմատական վերափոխումներ կատարվեցին էկոնոմիկայում և հասարակական-քաղաքական կյանքում, ստեղծվեցին բոլոր անհրաժեշտ նախադրյալները մտավոր ու ֆիզիկական աշխատանքի հակադրությունը վերացնելու համար։ Սակայն այժմ, սոցիալիզմի պայմաններում, դեռևս առկա են հին հասարակարգից ժառանգված մի շարք հակասություններ, որոնք անխուսափելի են կոմունիստական հասարակության առաջին փուլում։ Մտավոր և ֆիզիկական աշխատանքի հակադրությունը, որը ունի հազարամյա պատմություն, չէր կարող սոցիալիստական կարգերի հաստատմամբ միանգամից վերացվել։ Անցյալի այդ ծանր

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 25, էջ 610։

[2] Նույն տեղում, հ. 29, էջ 513։

ժառանգությունը, ինչպես Վ. Ի. Լենինն է նկատել «...միանգամից չի կարելի վերացնել, լոկ արտադրության միջոցները հասարակական սեփականություն դարձնելով, միմիայն կապիտալիստներին էքսպրոպրացիայի ենթարկելով»[3]։

Սոցիալիզմի օրոք բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակը դեռևս չի հասել ինժեներա-տեխնիկական աշխատողների մակարդակին. մտավոր և ֆիզիկական աշխատանքով զբաղվող մարդկանց միջև գոյություն ունի կուլտուր-տեխնիկական մակարդակի տարբերություն։ Այդ հակադրությունը որակական նոր բնույթ է ստանում, արտահայտվում բարեկամական դասակարգերի միասնության շրջանակներում և իր մեջ այլևս չի պարունակում դասակարգային շահերի անհաշտելի հակամարտություն։ Ինքնին հասկանալի է, որ շահագործման ամեն մի ձև բացառող սոցիալիստական արտադրահարաբերությունները պետք է վերացնեին նաև մտավոր և ֆիզիկական աշխատանքի հակամարտությունը, որը հիմնականում իր դրսևորումն էր գտնում այն իրողության մեջ, որ ֆիզիկական աշխատանքով զբաղվող մարդիկ շահագործվում էին մտավոր աշխատանքի ներկայացուցիչների կողմից։

Սովետական Միության, չին ժողովրդի և սոցիալիստական մյուս երկրների ժողովուրդների փորձը հերքեց բուրժուական ծախու գրչակների այն հակագիտական հայացքները, որոնցով հավերժացվում է մտավոր և ֆիզիկական աշխատանքի հակադրությունը, և մտավոր աշխատանքը միշտ իշխող համարվում ֆիզիկական աշխատանքի նկատմամբ։

Ներկայումս, երբ մեր երկիրը թևակոխել է իր զարգացման պատմական նոր ժամանակաշրջանը՝ կոմունիզմի ծավալուն կառուցման շրջանը, էլ ավելի պրակտիկ և առանձնահատուկ նշանակություն են ստանում մտավոր և ֆիզիկական աշխատանքի հարցերը։ ՍՄԿՊ 21-րդ արտահերթ համագումարում ընկ. Ն. Ս. Խրուշչովի տված զեկուցման մեջ և համագումարի որոշումներում մի շարք տեսական պրոբլեմներ մշակվեցին, կապված սոցիալիզմից կոմունիզմին անցնելու շրջանի հետ։

Սոցիալիզմից կոմունիզմին անցնելու օրինաչափ զարգացման ընթացքում կարևոր գործնական խնդիրը համարվում է կոմունիստական հասարակարգի նյութատեխնիկական բազայի ստեղծումը, սոցիալիստական արտադրողական ուժերի նոր, հզոր վերելքը։ Համագումարը գտնում է, որ սոցիալիստական արտադրության հետագա զարգացման և կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման գլխավոր պայմանը հանդիսանում է նոր տեխնիկայի, կոմպլեքսային մեքենայացման և արտադրողական պրոցեսների ավտոմատացման լայն արմատավորումը։ Այդ ուղղությամբ խնդիր է դրվում յոթնամյակի ընթացքում վերացնել ձեռքի ծանր աշխատանքը արդյունաբերության, շինարարության մեջ և տրանսպորտում։

«Նյութատեխնիկական նոր հիմքի վրա սոցիալիստական արտադրության հետագա զարգացման, աշխատանքի հետ ուսուցումը ավելի ու ավելի սերտորեն միացնելու համար տեղի կունենա մտավոր ու ֆիզիկական աշխատանքի միջև եղած էական տարբերությունների աստիճանական վերացում»[4]։

---

[3] Լ. Ի. Լենին, Երկեր, հ. 25, էջ 610։

[4] Ն. Ս. Խրուշչով, ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թվականների կոնտրոլ թվերի մասին, էջ 136։

Կոմունիստական հասարակության ստորին փուլում, սոցիալիզմի ժամանակ, էական տարբերություններ գոյություն ունեն մտավոր և ֆիզիկական աշխատանքի, որակյալ և անորակ աշխատանքի միջև։ Սոցիալիզմի օրոք բաշխումը հիմնականում իրականացվում է յուրաքանչյուրին՝ ըստ իր աշխատանքի սկզբունքով։ Նյութական բարիքների բաշխման այս սկզբունքը օբյեկտիվորեն պայմանավորված է նրանով, որ կոմունիզմի առաջին փուլում, սոցիալիզմի ժամանակ, աշխատանքը դեռ լրիվ չի դարձել մարդկանց կենսական առաջին անհրաժեշտությունը և արտադրողական ուժերի զարգացումը դեռ չի հասել այնպիսի մակարդակի, որ ստեղծվի սպառման առարկաների լիակատար առատություն և հնարավոր լինի դրանք բաշխել ըստ մարդկանց պահանջների։ «Ըստ աշխատանքի բաշխումը ապահովում է մարդկանց նյութական շահագրգռվածությունը արտադրության արդյունքների նկատմամբ, խթանում է աշխատանքի արտադրողականության աճը, աշխատողների որակավորման բարձրացումը, արտադրության տեխնիկայի կատարելագործումը[5]։

Միայն կոմունիստական հասարակության բարձրագույն փուլում, երբ արտադրողական ուժերը այնքան կզարգանան, որ ձեռք կբերվի սպառման առարկաների լիակատար առատություն, երբ բոլոր մարդիկ կամավոր կերպով կներգրավվեն նյութական արժեքների արտադրության կարևոր գործի մեջ, կվերանան մտավոր և ֆիզիկական աշխատանքի էական տարբերությունները։ Այն ժամանակ արդեն «հասարակությունը կկարողանա իր դրոշակի վրա գրել՝ «Յուրաքանչյուրից՝ ըստ նրա ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ նրա պահանջմունքների»[6]։

Ժողովրդական տնտեսության զարգացման առաջիկա տասնհինգ տարվա հեռանկարային պլանը ՍՍՌՄ-ում կոմունիզմի կառուցման տնտեսական ծրագիրն է։ Այս ծրագրի իրագործումը կապահովի արտադրողական ուժերի բուռն զարգացումը, ժողովրդի նյութական բարեկեցության ու կուլտուրական մակարդակի հետագա նշանակալի բարձրացումը, որոնք անհրաժեշտ են հասարակության անդամների համակողմանի զարգացման համար։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան լիկվիդացնելով արտադրության միջոցների և գործիքների մասնավոր սեփականությունը, մարդու շահագործումը մարդու կողմից, վերացրեց մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև եղած դարավոր հակամարտությունը։ Առաջին և կարևոր նախադրյալը այդ հակադրության վերացման գործում իշխանության գրավումն էր պրոլետարիատի կողմից, որը ստեղծեց նոր քաղաքական կյանք։ Այդ նշանակում է, որ բանվոր դասակարգի սոցիալական ֆունկցիան այլևս չի սահմանափակվում միայն արտադրության պրոցեսներով, ֆիզիկական աշխատանքով։ Բանվորների և գյուղացիների գիտակից մասը պատմության մեջ առաջին անգամ հնարավորություն ստացավ զբաղվելու մտավոր աշխատանքով, պետության և արդյունաբերության կառավարման ընդհանուր գործերով։ Մեր երկրում կատարվող սոցիալական խոշոր վերափոխումները, կուլտուրական ռևոլյուցիան, էկոնոմիկայի սոցիալիստական վերակառուցումը (ինդուստրացումը և գյուղատնտեսության կոլեկտիվացումը) պայմաններ են ստեղծում մտավոր և ֆիզիկական աշխատանքի հակադրությունը վերացնելու համար։

---

[5] Նույն տեղում, էջ 140—141։

[6] Մարքս, Էնգելս, հ. 2-րդ, էջ 19—20։

Կոմունիստական պարտիան, դեկավարվելով լենինյան ազգային քաղաքականության սկզբունքներով, Սովետական Միության բոլոր ազգերին ու ժողովուրդներին համատեղ պայքարի դուրս բերեց սոցիալիզմի կառուցման համար: Նատ ժողովուրդներ, որոնք ցարական Ռուսաստանի օրոք չունեին իրենց ազգային ինտելիգենցիան, սոցիալիզմի կարգերի շնորհիվ հասել են խոշոր նվաճումների:

Ինչպես Սովետական մյուս ռեսպուբլիկաներում, այնպես էլ Սովետական Հայաստանում արդյունաբերության շինարարությանը զուգընթաց մեծ ծավալ են ստանում կուլտուրական շինարարության, լուսավորության, մասնագիտական ու որակյալ կադրեր պատրաստելու և մտավոր ու ֆիզիկական աշխատանքի մերձեցման աշխատանքները:

Սովետական հասարակարգի պայմաններում արմատական փոփոխություններ կատարվեցին ռեսպուբլիկայի կյանքում: Կարճ ժամանակաշրջանում Հայաստանը Ռուսաստանի հետամնաց գաղութային ծայրամասից դարձավ զարգացած սոցիալիստական արդյունաբերության և առաջավոր գյուղատնտեսության երկիր:

Բացի տնտեսական խնդիրներից Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության առաջ իրենց ամբողջ հասակով ծառացել էին աշխատավորական լայն մասսաների մեջ կուլտուր-մասսայական աշխատանքների ծավալման հարցերը: Անհետաձգելի լուծում էր պահանջում նաև մտավոր և ֆիզիկական աշխատանքի հակադրության հարցը:

Երիտասարդ ռեսպուբլիկայի նոր պետական ապարատը իր գոյության առաջին իսկ օրերից հրապարակեց մի շարք դեկրետներ, որոնցով պայմաններ ստեղծեց աշխատավոր լայն մասսաներին սովետների, արհեստակցական միությունների, կոոպերացիայի և այլ հասարակական մասսայական կազմակերպությունների միջոցով ներգրավվելու պետության կառավարման ամենօրյա աշխատանքներին: Հայաստանի քայքայված տնտեսությունը վերականգնելու, սոցիալիստական շինարարության բոլոր ճյուղերը հսկայական թափով առաջ շարժելու համար անհրաժեշտ էին որակյալ կադրեր, նոր սոցիալիստական ինտելիգենցիա, որոնք իրենց անձնվեր, գիտակից աշխատանքով պետք է կենսագործեին պարտիայի ու կառավարության որոշումները: Սակայն նոր ինտելիգենցիայի ստեղծումը բանվորների և գյուղացիների միջավայրից, ինչպես Սովետական Ռուսաստանում, այնպես էլ մեր ռեսպուբլիկայում բավականին դժվար և լուրջ խնդիր էր և ընթանում էր անողոք դասակարգային պայքարի պայմաններում: Այդ խնդրում պարտիան դեկավարվում էր 8-րդ համագումարում ընդունված ծրագրային այն փաստաթղթով, ուր ասվում էր. «Հավասարապես անհրաժեշտ է բուրժուական մասնագետներին դնել ընկերական ընդհանուր աշխատանքի պայմաններում՝ ձեռք-ձեռքի տված գիտակից կոմունիստների դեկավարած շարքային բանվորների մասսայի հետ և դրանով նպաստել կապիտալիզմի կողմից անջատված ֆիզիկական ու մտավոր աշխատանքի աշխատավորների փոխադարձ ըմբռնմանը ու մերձեցմանը»[1]:

Այդ տարիներին նոր մասնագետ կադրերը հիմնականում պատրաստվում էին ռեսպուբլիկայի սահմաններից դուրս՝ ՌՍՖՍՀ-ում: Սովետական Հայաստանի երիտասարդ կադրերը եղբայրական ռուս ժողովուրդի օգնությամբ՝

[1] «ՍՄԿՊ բանաձևերում», մաս 1-ին, Հայպետհրատ, 1955, էջ 336:

Մոսկվայում և գանագան այլ քաղաքներում ձեռք էին բերում բարձրագույն կրթություն, սոցիալիստական շինարարության պրակտիկ աշխատանքները դեկավարելու հմտություն։

Պարտիան և կառավարությունը մշակեցին մի շարք միջոցառումներ՝ բանվորներին ու գյուղացիներին, ինչպես նաև նրանց երեխաներին միջնակարգ և բարձրագույն կրթությամբ ապահովելու համար։ 1926 1927 ուս. տարում ռեսպուբլիկայի դպրոցներում սովորում էին 122841 աշակերտ, որից 5977-ը բանվորներ էին, 2240-ը բատրակներ, 57279-ը գյուղացիներ[8]։

Ռեսպուբլիկայում գործում էին բազմաթիվ բանֆակներ, համապատասխան տեխնիկական կուրսեր, ինդուստրիալ տեխնիկումներ, որոնց նպատակն էր բարձրացնել արտադրության մեջ աշխատող բանվորների կրթական-տեխնիկական մակարդակը, հավորդակից դարձնել նրանց գիտության առաջավոր նվաճումներին։ 1925 1926 ուս. տարում Երևանի բանֆակում սովորում էին 370, Լենինականի բանֆակում՝ 320 հոգի[9]։

Հին ինտելիգենցիայի վերապատրաստման հետ միասին արդեն 1925—1926 թթ. բանվորներից և գյուղացիներից առաջանում են նոր կուլտուրական կադրեր, որոնք զգալի դեր են կատարում արտադրական տեխնիկական աշխատանքներում, գիտության և կուլտուրայի բնագավառում, պարտիական և պետական ապարատում։ ՍՍՌՄ-ում առաջին հնգամյակի ընթացքում միայն ուսումնական հաստատությունները պատրաստեցին 170 հազար բարձր որակի և 291 հազար միջին որակի մասնագետներ։

Պարտիայի և կառավարության միջոցառումները կուլտուրական շինարարության և հատկապես ժողովրդական լուսավորության բնագավառում տվեցին հիանալի արդյունքներ։ Կուլտուրական ռևոլյուցիայի շնորհիվ մեր երկրում արմատապես վերափոխվում է կրթական-լուսավորական գործը։ Լայն ծավալ է ստանում անգրագիտության և կիսագրագիտության վերացումը. այսպես օրինակ՝ սկսած 1920-ից մինչև 1940 թվականը ՍՍՌՄ-ի մասշտաբով իրենց անգրագիտությունը վերացրին մոտ 50 միլիոն մարդ։

Սովետական Հայաստանի արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, տրանսպորտը և ժողովրդական տնտեսության մյուս բոլոր ճյուղերը 1921/1925 թթ. վերականգնման շրջանում զգալի հաջողություններ հասան. պայմաններ ստեղծվեցին աշխատավորական մասսաների նյութական դրության բարելավման, բանվորների և ծառայողների քանակի ավելացման, մասավոր աշխատանքի ներկայացուցիչների աճման համար։ Ամրողջությամբ վերցրած՝ ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում աշխատող բանվոր-ծառայողների թիվը (բացի գյուղատնտեսությունից) 1922 թ. 14189-ից 1925 թ. հասել էր 23828-ի, մասավոր աշխատանքով զբաղվողների թիվը՝ 7808-ից հասել էր՝ 10545-ի[10]։

Մեր երկրի սոցիալիստական ինդուստրացման և գյուղատնտեսության վերակառուցման տարիներին բանվորական և գյուղացիական մասսաները հանդես բերին աշխատանքային մեծ ակտիվություն և ձեռներեցություն։ Որոշակի

---

[8] Խորհրդային Հայաստանը թվերով։ Վիճակագրական տեղեկություն (1923—1927), էջ 36—37։

[9] Խորհրդային Հայաստանը 1920—1925 թթ., ժողովածու, էջ 309։

[10] Աշխատանքը Հայաստանում։ Վիճակագրական տեղեկատու (1923—1927), էջ 2—3։

շրջադարձ կատարվեց նոր տեխնիկայի և նրան տիրապետող մարդկանց նկատմամբ նախկինում գոյություն ունեցող հայացքներում։ «Տեխնիկան է որոշում ամեն ինչ» լոզունգը, որը կիրառվում էր առաջին հնգամյակում, պարտիան փոխարինեց 2-րդ հնգամյակում «Տեխնիկային տիրապետած կադրերն են որոշում ամեն ինչ» լոզունգով։

Երկրի սոցիալիստական վերափոխման գործում բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության վճռականությունը առանձնապես դրսևորեց ստախանովյան շարժման մեջ։ Ստախանովյան շարժման արագ ծավալումը ցույց էր տալիս, որ մեր երկրի բանվոր դասակարգը արդեն սկսել էր բարձրացնել իր կուլտուր-տեխնիկական մակարդակը, պարզ կատարողից դառնում էր գիտակից ստեղծող և արտադրության կազմակերպիչ։ Ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում կատարված մեծ վերափոխումների ընթացքում դրսևորվեց սովետական մարդկանց բարոյական նոր կերպարը, որ ամենից առաջ արտահայտվեց աշխատանքի և հանրային սեփականության նկատմամբ նոր վերաբերմունքի մեջ։ Սոցիալիստական արտադրահարաբերությունները քաղաքի և գյուղի հարյուր հազարավոր աշխատավորներին մղում են դեպի աշխատանքային սխրագործություն, համարձակ նախաձեռնություն և սոցիալիստական մրցություն։

* *

Կառուցելով սոցիալիստական հասարակարգ, Սովետական Միությունը թևակոխում է զարգացման մի նոր ժամանակաշրջան՝ կոմունիստական հասարակարգի ծավալուն կառուցման ժամանակաշրջան։ Սոցիալիզմից կոմունիզմին անցնելու համար անհրաժեշտ է էկոնոմիկայի բոլոր ճյուղերի հետագա հզոր վերելքի ապահովում՝ ծանր ինդուստրիայի առավել աճման բազայի վրա։

Տեխնիկայի հետագա պրոգրեսը անխզելիորեն կապված է հասարակության կուլտուրական աճի, նրա անդամների բազմակողմանի զարգացման հետ։ Որքան բարձր լինեն մեր կադրերի կուլտուրական մակարդակը, այնքան խոր և ամուր կլինեն նրանց գիտական և տեխնիկական գիտելիքները, այնքան ավելի լավ կօգտագործվեն նորագույն տեխնիկական, կոմպլեքսային մեքենայացումը և արտադրության բազմակողմանի ավտոմատացումը։ Բարդ ավտոմատիկ հաստոցները, քայլող էքսկավատորները, էլեկտրահոդային արկերը և այլ տեխնիկական սարքավորումները դեկավարելու համար բանվորից պահանջվում է մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, թեորիական մեխանիկա և այլ գիտելիքներ։ Հետևապես անհրաժեշտ է միջնակարգ և բարձրագույն մասնագիտական կրթություն, հարկավոր է որակավորման բարձր մակարդակ։ Վ. Ի. Լենինը կոմունիզմի կառուցումը սերտորեն կապելով պարտիայի դաստիարակչական աշխատանքի խնդիրների հետ գտնում էր, որ անհրաժեշտ է անցնել «...բազմակողմանի զարգացած ու բազմակողմանի պատրաստված մարդկանց դաստիարակություններ, որոնք կարողանում են ամեն ինչ անել։ Դեպի այդ է գնում կոմունիզմը, պետք է գնա և կհասնի, բայց միայն մի քանի երկար տարիների ընթացքում»[1]։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 82։

Լենինի հռչակավոր լոզունգը «Կոմունիզմը դա Սովետական իշխանությունն է պլյուս ամբողջ երկրի էլեկտրիֆիկացիան», առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերել այժմ, երբ սովետական մարդկանց առջևյան կազմում է արդեն կոմունիզմի նյութական տեխնիկական բազայի կառուցումը։ Յոթնամյակի վերջին էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությունը մեր երկրում պետք է հասնի 500—520 միլիարդ կիլովատ ժամի, իսկ էլեկտրակայանների սահմանված կարողությունը պետք է աճի ավելի քան երկու անգամ։ Նախատեսվում է էլեկտրակայանների հետագա միավորում խոշոր էներգասիստեմների մեջ, որպեսզի ստեղծվի Սովետական Միության միասնական էներգետիկ սիստեմ։ Շարք կմտնեն մի շարք ատոմային էլեկտրակայաններ՝ տարբեր տիպերի ռեակտորներով։

Հինգերորդ հնգամյակի տարիներին խոշոր աշխատանքներ կատարվեցին հայկական էներգետիկ սիստեմում ավտոմատիկայի արմատավորման գործում։ Էներգոսիստեմի բոլոր հիդրոկայանների ագրեգատները լիովին ավտոմատացվել են։ Դրա հետ միասին կատարվել է մի շարք աշխատանքներ, ինչպես օրինակ, էլեկտրահաղորդման գծերի կրկնակի ավտոմատիկ միացումը, ռելեների ագրեգատների ավտոմատիկ գործարկումը, ավտոմատիկ բեռնաթափումը և այլն։ Հայաստանի էլեկտրաէներգետիկ արդյունաբերության մեջ կիրառված է դիսպետչերական կառավարման սիստեմ (հեռուստային կառավարում)։ Ավտոմատացման և հեռուստավորության էությունը կայանում է նրանում, որ իրարից անջատ գտնվող հեռավորության վրա գործող հիդրոէլեկտրակայանների աշխատանքի վերահսկումը, կառավարումը և կոորդինացումը կենտրոնացված են Երևանում գտնվող դիսպետչերական կետում։ Հետաքրքրական է նշել, որ ավտոմատացման և հեռուստամեքենայացման շնորհիվ, երբ էլեկտրաէներգիայի արտադրությունը աճեց ավելի քան երկու անգամ, զգալիորեն կրճատվեց Հայէներգոյի ցանցում աշխատող բանվորների թիվը և դրա փոխարեն մոտ՝ 16 տոկոսով աճեց ինժեներա-տեխնիկական անձնակազմը։

Արտադրական պրոցեսների մեքենայացումը և ավտոմատացումը հնարավորություններ են տալիս անցյալի ամենածանր պրոֆեսիաները, որոնք կատարվում էին ֆիզիկական ուժերի մեծ լարմամբ, փոխարինել մեքենաների, գիտական հաշվարկումների հիման վրա կատարվող աշխատանքներով՝ այլ կերպ ասած մտավոր աշխատանքով։ Տեխնիկայի զարգացումը աշխատանքային մի շարք ճյուղերում պահանջում է մարդու փոխարինումը ավտոմատիկ մեքենայով, որովհետև աշխատանքային մեծ ինտենսիվությունը, ճշգրիտ հաշիվները, բարդ տեխնոլոգիական պրոցեսները այլևս մարդուն հնարավորություն չեն տալիս անմիջականորեն կատարելու դրանք։ Մեր երկրի աշխատավորության կուլտուր-տեխնիկական մակարդակը և պրոֆեսիոնալ մասնագիտացման անընդհատ բարձրացումը ավելի է մերձեցնում աշխատանքի դանդաղ տեսակները՝ ստեղծելով աշխատանքային տարբեր ճյուղերի համար մեկ ընդհանուր հիմք։ Իրագործվում է մարքսիստական այն դրույթը, որ կոմունիզմի դարաշրջանում ազատ անցում կկատարվի մեկ պրոֆեսիայից դեպի մեկ ուրիշը և կվերանա աշխատանքի բաժանման միակողմանի բնույթը։

Մեքենայացված արտադրության տեխնիկական զարգացումը մեր երկրում կատարվում է ինտենսիվ կերպով և անխուսափելիորեն հանգում է արտադրության ավտոմատացմանը։ Մեքենայացման բարձրագույն ձևը ավտոմատացումն է, որի պայմաններում աշխատողն արդեն մի քանի, կամ մի ամ-

բողջ շարք մեքենաների գործողության վրա հսկողություն է իրականացնում։

ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թվականների յոթնամյա պլանով մեծ ուշադրություն է դարձվում արտադրական պրոցեսների կոմպլեքսային մեքենայացման ու ավտոմատացման հարցերի վրա։ Արտադրության պրոցեսների կոմպլեքսային մեքենայացումն ու ավտոմատացումն այն գլխավոր միջոցներն են, որ ապահովում են ժողովրդական տնտեսության հետագա տեխնիկական առաջադիմությունը, աշխատանքի արտադրողության նոր վերելքը, արտադրանքի ինքնարժեքի իջեցումը և որակի բարելավումը։ Այժմ խնդիր է դրվում առանձին ագրեգատների ու օպերացիաների ավտոմատացումից անցնել ցեխերի, տեխնոլոգիական պրոցեսների ավտոմատացման և ամբողջովին ավտոմատացման ձեռնարկությունների ստեղծմանը։

Արտադրական պրոցեսների ավտոմատացումը մեր ռեսպուբլիկայում հետզհետե ավելի լայն տարածում է գտնում. մեծ աշխատանքներ է տարվում այդ ուղղությամբ Ալավերդու պղնձա-ձուլական կոմբինատում, Կանաչի գործարանում, պահածոների արդյունաբերության մեջ, Կիրովականի քիմիական կոմբինատում, հացի, գինու, կոնյակի գործարաններում, տեքստիլ արդյունաբերության մեջ և այլն։ Հայտնի է, որ տեխնիկական պրոգրեսի զարգացման գործում մեծ դեր է պատկանում մեքենաշինությանը։ Մեր արդյունաբերությունը արտադրում է նոր. կատարյալ մեքենաներ, մեխանիզմներ և ապարատներ, որոնք հնարավորություններ են տալիս հիմնականում մեքենայացնելու ծանր աշխատարար պրոցեսներ այդ թվում նաև օժանդակ աշխատանքները։ ՍՄԿՊ 20-րդ համագումարը մեքենաշինական արդյունաբերության աշխատողների առջև խնդիր դրեց՝ թողարկել կատարելագործված ու բարձր արտադրողականություն ունեցող մետաղահատ հաստոցներ, հզոր մամլակներ, ձուլման սարքավորումներ, ժամանակակից ավտոմատ մեքենաներ ու ագրեգատներ։

Մեքենաշինությունը լայնորեն զարգանում է նաև Հայաստանում։ Ամենուրեք մուտք է գործում նորագույն տեխնիկան։ Երևանի Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարանում վերջին երկու տարվա ընթացքում յուրացվել և շահագործման են հանձնվել 11 կոնվեյեր։ Էլեկտրամեքենաշինարարները մշակել են դանդաղ տիպի 55 մեքենաների կոնստրուկցիաներ, այդ թվում՝ համամիութենական սերիայի նոր տիպի գեներատորներ, տրանսֆորմատորներ, կառավարման վահաններ, շարժական էլեկտրակայաններ և այլն։

Նոր տեխնիկայի արմատավորման շնորհիվ Երևանի կոշիկի № 1 ֆաբրիկայի կոլեկտիվում համարյա 80 տոկոսով կրճատվեց ձեռքի աշխատանքը, կրկնակի չափով բարձրացավ աշխատանքի արտադրողականությունը և բարելավվեց արտադրանքի որակը։

Կիրովականի քիմիական կոմբինատի արտադրության հիմնական պրոցեսները մեքենայացված են։ Կոմբինատի շատ ցեխերում, հատկապես ազոտային խմբի ցեխերում, պրոցեսների մեծ մասը ավտոմատացված է, ֆիզիկական աշխատանքը այստեղ փոքր տեսակարար կշիռ ունի։ Քիմիական արդյունաբերության արտադրական պրոցեսների ավտոմատացման գործում զգալի աշխատանքներ է կատարվում Կիրովականի «Ավտոմատիկա» գիտա-հետազոտական ինստիտուտը։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի 20-րդ արտահերթ համագումարում հանդիսավորեն քննարկվեցին 1959—1965 թվականներում տեխնիկական առաջադիմության և աշխատանքի արտադրողականության աճման հար-

ցերը։ Ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության յոթնամյա պլանը լայն հեռանկարներ է բացում պրոցեսների մեքենայացման ու ավտոմատացման ասպարեզում։ Քիմիական արդյունաբերության մեջ ավտոմատացվելու են ոչ միայն արտադրական շատ պրոցեսներ, այլև տեխնոլոգիական պրոցեսների վերահսկողությունն ու կարգավորումը։ Նախատեսվում է Կիրովի անվան գործարանում, Կիրովականի քիմիական կոմբինատում և «Պոլիվինիլացնատան» գործարանում քիմիական մի շարք պրոցեսների կոմպլեքսային ավտոմատացումը։ Մեքենաշինական ու սարքաշինական գործարաններում կիրառվելու են մշակման հոսքային մեթոդներ։ Ավելի լայն տարածում են ստանալու ագրեգատային, ավտոմատ ու կիսաավտոմատ հաստոցները, մեքենաների, մետաղահատ հաստոցների և ճշգրիտ սարքերի կոնվեյերային հավաքումը։ Ռեսպուբլիկայի էլեկտրատեխնիկական ձեռնարկություններում աշխատանքները մեքենայացնելու համար նախատեսվում է գործարկել 32 կոնվեյերային մեքենա։

Նոր տեխնիկան և գիտության նվաճումները հաջողությամբ կիրառվում են նաև ռեսպուբլիկայի գյուղատնտեսության մեջ։ Ներկայումս կոլտնտեսությունների և սովխոզների դաշտերում աշխատում են ավելի քան 5000 տրակտոր 75,5 հազար ձիու ուժի կարողությամբ, մեծ թվով կոմբայններ և այլ ժամանակակից մեքենաներ ու գործիքներ։ 1940 թվականի համեմատությամբ ռեսպուբլիկայի տրակտորային պարկը աճել է գրեթե 2,7 անգամ։ Վերջին տարիներում իրականացված տնտեսական ու քաղաքական խոշոր միջոցառումները զգալիորեն բարելավեցին ռեսպուբլիկայի գյուղատնտեսության վիճակը։

Գյուղատնտեսությունն անընդհատ զինումը ժամանակակից մեքենաներով ու մեխանիզմներով հնարավորություններ է ստեղծում տպահովելու գյուղատնտեսական աշխատանքների բարձր մեքենայացումը. օրինակ՝ վարի, փոցխումի, ցանքի շարամեջ մշակման և մի շարք այլ աշխատանքներ մեքենայացված են գրեթե 90—100 տոկոսով։ Նոր տեխնիկայի արմատավորումը ապահովում է արտադրական պրոցեսների կոմպլեքսային մեքենայացումը, նպաստում դաշտային աշխատանքների արագացմանը, մեխանիզատորների և կոլտնտեսականների աշխատանքի արտադրողականության բարձրացմանը։ Գյուղատնտեսության մեքենայացումը և էլեկտրաֆիկացումը զգալի չափով բարձրացրել է կոլտնտեսային աշխատանքի արտադրողականությունը։ Ներկայումս էլեկտրաֆիկացված է ռեսպուբլիկայի կոլտնտեսությունների 83 տոկոսը։ 1960 թ. նախատեսվում է էլեկտրաֆիկացնել Հայաստանի կոլտնտեսությունների և սովխոզների բոլոր բնակավայրերը։

Սովետական Միության արտադրական ձեռնարկություններում տեղադրված տեխնիկան, կիրառվող առաջավոր տեխնոլոգիան և թողարկվող արտադրանքի որակական ցուցանիշները վկայում են մեր երկրում ստեղծված արդյունաբերության, նրանում գրաղված բանվորական ու ինժեներա-տեխնիկական անձնակազմի բարձր մակարդակը։ 1950—1958 թվականներին ժողովրդական տնտեսության մեջ արմատավորվեց մոտավորապես տասը միլիոն գյուտ և ռացիոնալիզատորական առաջարկություն։ Բանվորների կուլտուրատեխնիկական աճի մասին են խոսում այն փաստերը, որ միայն 1958 թ. առաջին եռամսյակում ռեսպուբլիկայի արտադրության մեջ ներդրվեցին 2571 ռացիոնալիզատորական առաջարկություններ։

Եթե մինչհեղափոխությունը Հայաստանը չուներ տեխնիկական ինտելիգենցիա, ապա այժմ ժողովրդական տնտեսության մեջ աշխատում են 11 հազար ինժեներներ և տեխնիկներ, գիտա-տեխնիկական հաստատություններում աշխատում են 2600 մարդ, որոնց մեծամասնությունը դոկտորներ և գիտության թեկնածուներ են։

1957 թ. վերջում Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ բարձրագույն կրթությամբ աշխատող մասնագետների թիվը կազմում էր 32,1 հազար, միջնակարգ կրթությամբ մասնագետներինը՝ 28,3 հազար, ընդ որում բարձրագույն կրթությամբ ինժեներների թիվը 6,8 հազար էր կազմում, գյուղատնտեսներինը՝ 3,7 հազար, զոոտեխնիկներինը, անասնաբույժներինը, անտառագետներինը՝ 3 հազար և այլն[12]։ Բարձրագույն և միջնակարգ մասնագետների թվի աճը վկայում է մտավոր և ֆիզիկական աշխատողների էական տարբերությունների լիկվիդացման պրոցեսը։

1956—1957 ուս. տարում ռեսպուբլիկայում կար 1197 դպրոց, որտեղ սովորում էին ավելի քան 274 հազար աշակերտ։ Բացի դրանից ռեսպուբլիկայում գործում էին բանվորական և գյուղական երիտասարդության 197 միջնակարգ դպրոց, որտեղ սովորում էին 15600 երիտասարդ։

Կարևոր է նշել, որ Հայկական ՍՍՌ-ում 1954 թվականին յուրաքանչյուր 10000 բնակչին ընկնում է տարրական ու միջնակարգ հանրակրթական դպրոցների ավելի քան 2000 սովորող (1914—1915 ուս. տարում բնակչության յուրաքանչյուր 100 հոգուն ընկնում էր ընդամենը 3,5 սովորող)։

Բնակչության միևնույն քանակին Իտալիայում ընկնում էր 1081 սովորող, ԳՖՌ-ում՝ 1244, Ֆրանսիայում՝ 1432, Անգլիայում՝ 1524, Թուրքիայում՝ 830 սովորող, 1950 թ. Սովետական Հայաստանում բնակչության յուրաքանչյուր շնչի վրա կատարված ծախսը կազմել է 421 ռ. իսկ 1914 թ.՝ միայն 39 կոպեկ, Սովետական Հայաստանի պետական բյուջեի ավելի քան 40 տոկոսը ծախսվում է լուսավորության բնագավառի վրա։

Սովետական Հայաստանում գործում են 12 բարձրագույն ուսումնական հաստատություններ, 22 հազար ուսանողներով, մինչդեռ նախահեղափոխությունը Հայաստանում չկար ոչ մի բարձրագույն ուսումնական հաստատություն։ Այժմ գոյություն ունեն 44 տեխնիկումներ և ուրիշ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ 16400 սովորողներով[13]։ Նախահեղափոխությունը Հայաստանում եղել է 1 միջնակարգ դպրոց։

Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը մեծ ուշադրություն են դարձնում գիտական աշխատողների պատրաստման, լաբորատորիաների և գիտա-հետազոտական ինստիտուտների ստեղծման վրա։ Նախահեղափոխությունը Հայաստանում չկար ոչ մի գիտա-հետազոտական հիմնարկություն, այժմ ռեսպուբլիկայում բացի Գիտությունների ակադեմիայից, կան նաև այլ գիտական-հետազոտական հիմնարկներ, որոնց թիվը հասնում է 59-ի, իսկ գիտական աշխատողների թիվը՝ 2600 հոգու[14]։

Հայկական ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեջ այժմ աշխատում են բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ մոտ

[12] Статистический бюлетень за 1957 год 1 (3), стр. 197.

[13] Там же, стр. 213.

[14] Ս. Հ. Թովմասյան, Սովետական Հայաստանը մեծ հոկտեմբերի ծնունդն է, էջ 162—163։

60400 մասնագետներ։ Այդ նոր ինտելիգենցիան աճել է ոչ միայն այն մարդկանցից, որոնք ավարտել են բարձրագույն դպրոցը, այլև ձեռնարկությունների պրակտիկ աշխատողներից, որակյալ բանվորներից։

Սովետական երկրում աշխատավորների համար ստեղծված են բոլոր անհրաժեշտ պայմանները՝ առանց արտադրությունից կտրվելու բարձրացնելու իրենց կուլտուր-տեխնիկական մակարդակը։ Բանվորների ընդհանուր կուլտուրայի և տեխնիկայի գիտելիքների անընդհատ բարձրացման ցայտուն օրինակներ են տալիս Երևանի էլեկտրամեքենաշինական, Կիրովի անվան գործարանները և Քաջարանի պղնձա-մոլիբդենային կոմբինատը։ Այս գործարանների բանվորների մեծ մասը սովորում է դասընթացներում, իսկ մյուս մասը՝ հեռակա կարգով ավարտել է բուհերը, տեխնիկումները և այժմ գրավում են ինժեներա-տեխնիկական կարևոր պոստեր։ Օրինակ՝ Կիրովի անվան գործարանում ավելի քան 100 երիտասարդներ այս ուսումնական տարում սովորում են առանց արտադրությունից կտրվելու։ Նրանցից 48 հոգի սովորում է գործարանին կից № 23 բանվորական դպրոցում։ Երևանի էլեկտրամեքենաշինական գործարանում այս ուսումնական տարում 577 աշխատողներ սովորում են միջնակարգ դպրոցներում, տեխնիկումներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում, ըստ որում 92 հոգի սովորում են տեխնիկական բուհերում, 135-ը տեխնիկումներում, 350-ը բանվորական դպրոցներում։ Ներկայումս Քաջարանում աշխատում են բարձրագույն կրթություն ունեցող 250 մարդ, որոնցից 105-ը ինժեներներ են։ Այդ թիվը հինգ անգամ ավելի է նախահեղափոխյան Անդրկովկասում լեռնային աշխատանքներում ընդգրկված ինժեներների թվից։

Պարտիայի 20-րդ համագումարի դիրեկտիվների համաձայն վերջին տարիների ընթացքում որոշ փոփոխություններ կատարվեցին դպրոցական աշխատանքի բնագավառում։

Ուսուցումը կյանքին մոտեցնելու, սովորողների տեսական գիտելիքները աշխատանքային հմտություններին հետ զուգակցելու նպատակով մեր երկրի մի շարք դպրոցներում կազմակերպվել են աշակերտական բրիգադներ, ուսուցմանը գործնական բնույթ է տրվել, դպրոցական աշխատանքը ստացել է պոլիտեխնիկական կողմնորոշում։ Հիշյալ ձեռնարկումները տվեցին իրենց անժխտելի դրական արդյունքները։ Աշակերտների մեջ վերանում է արհամարհական վերաբերմունքը ֆիզիկական աշխատանքի նկատմամբ։ Արդեն նկատվում է, որ տասնամյակը ավարտած պատանիներն ու աղջիկները սիրով են գնում աշխատելու ֆաբրիկաներում, գործարաններում, կոլտնտեսություններում, սովխոզներում, ակտիվորեն մասնակցում են հասարակության համար անհրաժեշտ արժեքների արտադրության մեծ գործին։ Բավական է նշել, որ 1958 թվականի շրջանավարտների ճնշող մեծամասնությունը այժմ աշխատում է արտադրության մեջ։ Արտադրական ուսուցման մեր դպրոցները երկու հազար սովորողների արդեն տվել են խառատի, փականագործի, տրակտորիստի ու կոմբայնավարի օգնականի որակավորում։

Դպրոցների կապը արդյունաբերական ձեռնարկությունների ու կոլտնտեսությունների հետ մեր ռեսպուբլիկայում դեռևս կատարվում են անբավարար։ Դպրոցի վերակառուցման ուղիները ճիշտ ու պարզորոշ ցույց են տրված «Կյանքի հետ դպրոցի կապի ամրապնդման և երկրում ժողովրդական կրթության սիստեմի հետագա զարգացման մասին» ՍՄԿՊ Կենտկոմի ու

ՍՍՌՄ Մինիստրների Սովետի թեզիսներում։ Անհրաժեշտ է վճռականորեն վերակառուցել մեր աճող սերնդի դպրոցական դաստիարակության սիստեմը,— ասված է ընկեր Ն. Ս. Խրուշչովի կյանքի հետ դպրոցի կապի ամրապնդման վերաբերյալ նամակում։ Այս գործում ամենագլխավորն այն է, որ բոլոր երեխաները պատրաստվեն օգտակար աշխատանքի համար, մասնակցեն կոմունիստական հասարակարգի կառուցմանը։

Գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումների վրա խարսխվող ժամանակակից արտադրությունը միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտներից պահանջում է թեորիայի ու պրակտիկայի միասնության բարձր մակարդակ։ Միջնակարգ ու բարձրագույն դպրոցի վերակառուցման վերաբերյալ թեզիսների կենսագործումը վիթխարի նշանակություն կունենա սովետական հասարակության նյութական և հոգևոր հարստության հետագա զարգացման համար, հատկապես այն մեծ պլանների իրականացման համար, որոնք քննարկեց և ընդունեց ՍՄԿՊ 21-րդ համագումարը։

Մասավոր և ֆիզիկական աշխատանքի էական տարբերությունների հաղթահարման գործում կարևոր միջոցառումներից մեկը ՍՄԿՊ 21-րդ համագումարի այն որոշումն է, որը նախատեսում է յոթնամյակում իրագործել բանվորների և ծառայողների աստիճանաբար փոխադրումը յոթժամյա աշխատանքային օրվա, իսկ ածխային և լեռնահանքային արդյունաբերության մեջ՝ վեցժամյա աշխատանքային օրվա։

Այդ միջոցառումը հաջողությամբ կենսագործվում է ռևսպուբլիկայի արտադրական ձեռնարկություններում։ Այս տարվա չորրորդ եռամսյակում և 1960 թվականի առաջին կիսամյակում յոթժամյա աշխատանքային օրվա կըփոխադրվեն նաև մեքենաշինության, հաստոցաշինության, էլեկտրատեխնիկական և սարքաշինական քառասուն ձեռնարկություններ։

Սոցիալիզմի օրոք արտադրության ղեկավարման գործում աշխատավորների մասնակցության կոնկրետ ձևերը բազմազան են. ՍՄԿՊ և Սովետական կառավարության այնպիսի կարևոր որոշումներ, ինչպիսիք են արդյունաբերության և շինարարության կառավարման վերակառուցումը, մեքենա-տրակտորային կայանների վերակազմումը, «ՍՄԿՊ 21-րդ համագումարին ընկեր Ն. Ս. Խրուշչովի զեկուցման թեզիսները, ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թվականների կոնտրոլ թվերի մասին» և «կյանքի հետ դպրոցի կապի ամրապնդման և երկրում ժողովրդական կրթության սիստեմի հետագա զարգացման մասին» քննարկվեցին և ընդունվեցին աշխատավոր մասսաների ակտիվ մասնակցությամբ։ Աշխատավորներին արտադրության կառավարմանը ակտիվ մասնակից դարձնելու գործում կարևոր նշանակություն ունեն արտադրական խորհրդակցությունները։ Հայտնի է, որ արտադրական խորհրդակցություններում բանվորներն ու ծառայողները հնարավորություն են ունենում բացահայտելու արտադրության կազմակերպման ու ղեկավարման գործում եղած թերությունները և առաջարկություններ մտցնելու դրանք ժամանակին վերացնելու համար։

Այսպես, օրինակ, Կիրովի անվան գործարանի 2—1 ցեխի փականագործական հրապարակում շատ աշխատանքներ կատարվում էին ձեռքով ու պրիմիտիվ եղանակով։ Ցեխի արտադրական խորհրդակցությունում առաջավոր բանվորները այդ բանի համար քննադատեցին ցեխի ղեկավարությանը, նշեցին, որ գործարանի տեխնիկական բարձր հագեցվածության պայմաններում

նման վիճակն անթույլատրելի է։ Բանվորների այդ առաջարկը կենսագործելով, ցեխի դեկավարությունը փականագործական հրապարակում տեղադրեց համապատասխան հաստոցներ։ Դրա շնորհիվ աշխատանքի արտադրողականությունը բարձրացավ ավելի քան երեք անգամ և բանվորներն ազատվեցին ձեռքի ծանր աշխատանքից»։

Հաշվի առնելով Լենինգրադի առաջավոր ձեռնարկությունների փորձը, այս տարվա հունվարին Լենինականի Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ կոմբինատի արտադրական հիմնական օբյեկտներում կազմակերպվեց մշտական գործող արտադրական խորհրդակցություն, որոնցում ընդգրկվեցին արտադրության 530 առաջավոր բանվորներ և ինժեներա-տեխնիկական աշխատողներ։ Հիշյալ կոմբինատի արտադրական խորհրդակցությունը հաշվի է առնում արտադրության հրամանատարների և շարքային բանվորների գիտությունները՝ կոնկրետ միջոցառումներ մշակելով դրանց իրագործման համար։

Արտադրության վերելքի և ժողովրդի կոմունիստական դաստիարակության գործում հսկայական դեր են խաղում նաև մեր երիտասարդության մեջ լայն տարածում գտած կոմունիստական աշխատանքային բրիգադները, և սոցիալիստական մրցության զանազան ձևերը։

Կոմունիստական պարտիայի կողմից աշխատավորների կուլտուր-տեխնիկական մակարդակի հետագա բարձրացման ուղղությամբ մշակված միջոցառումները, որ նշվել են յոթնամյա պլանում, մի նոր էտապ են նշանավորում մտավոր և ֆիզիկական աշխատանքի էական տարբերությունների հաղթահարման գործում։ Սակայն այդ տարբերությունների վերացումը չի նշանակում, թե կվերանա ամեն մի զանազանություն նրանց միջև։ Մարքսը Լ. Կուգելմանին գրած նամակում ասում էր. «...Ինքնին ակնհայտ է, որ հասարակական աշխատանքի բաժանման անհրաժեշտությունը որոշակի համամասնությամբ ոչ մի կերպ չի կարող վերանալ հասարակական արտադրության որոշակի ձևում, միայն կարող են փոխվել նրա արտահայտման ձևերը»[16]։

Այդ նշանակում է, թե աշխատանքի բաժանումն առհասարակ պահպանվում է, միայն վերանում է աշխատանքի բաժանման դոյություն ունեցող ձևը, որը մարդուն իր ողջ կյանքի ընթացքում դատում է մեկ մասնագիտության։

Կոմունիզմի կառուցումը տնտեսական զարգացման և հասարակության կուլտուրական վերակառուցման բարդ և դժվարագույն մի պրոցես է։ Այն ենթադրում է մարդու հոգևոր ու ֆիզիկական բազմակողմանի զարգացումը։ Այն հնարավորություն է ստեղծում հասարակության բոլոր անդամներին դառնալու հասարակության զարգացման ակտիվ գործիչներ, ազատորեն ընտրելով իրենց ցանկացած զբաղմունքը։

Հայաստանի աշխատավորները Սովետական բազմազգ ժողովուրդների հետ միասին, Կոմունիստական պարտիայի դեկավարությամբ վստահորեն առաջ են շարժվում կոմունիզմի ճանապարհով, որի ընթացքում աստիճանաբար վերանում են նաև մի շարք հակասություններ, տարբերություններ, դրանց թվում նաև մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև եղած էական տարբերությունները։

---

[16] «Կիրովեց» թերթ, 26-ը օգոստոսի, 1957։

[17] К. Маркс и Ф. Энгельс. Избранные письма, стр. 208, 1953.